

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Արրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հեղինե Բիշարյանի, Միեր Շահգեղյանի, Հովհաննես Մարգարյանի և Իշխան Խաչատրյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Երևան քաղաքում խոշոր առևտրային օբյեկտների տեղակայման չափորոշիչներ սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-072-04.09.2012-ՏՀ-010/0) վերաբերյալ:

1. Նախագծով ներկայացված խոշոր առևտրային օբյեկտների դասակարգման համար միայն առևտրային մակերեսը որպես դասակարգման չափանիշ սահմանելը բավարար պայման չէ: Գտնում ենք, որ նշված չափորոշիչները կարելի է սահմանել՝ հիմք ընդունելով առևտրի օբյեկտների և առևտրի իրականացման վայրերի զբաղեցրած առևտրական տարածքների մակերեսները:

Միաժամանակ բնակչության սպասարկման որակի բարելավման նպատակով կարևորում ենք բնակչությանը նվազագույն առևտրական մակերեսներով ապահովվածության չափորոշիչների սահմանումը, ինչպես նաև խոշոր առևտրի օբյեկտների և խոշոր առևտրի իրականացման վայրերի տեղաբաշխման առանձնահատկությունները:

2. Նախագծով ներկայացված չեն խոշոր առևտրային օբյեկտների նոր շինարարության իրականացման թույլտվության համար քաղաքային տարածքների արդյունավետ օգտագործման գնահատման չափանիշները: Անհասկանալի են մայրաքաղաքի տարածքների պահուստավորման անհրաժեշտությունը: Հարկ է նշել, որ տարածքների նպատակային օգտագործումը քաղաքաշինության ոլորտի խնդիր է:

3. Հստակեցման կարիք ունեն արդեն իսկ գործող և կառուցվող առևտրային օբյեկտների վրա նախագծի դրույթները տարածելու աստիճանը և պայմանները:

4. Բացի դրանից՝

1) 1-ին հոդվածի 2-րդ մասից անհրաժեշտ է հանել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով» բառերը, քանի որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքը չի կարգավորում առևտրային օբյեկտների տեղակայման չափորոշիչների նկատմամբ պետական վերահսկողության իրականացման կարգի հետ կապված հարաբերությունները.

2) նախագծում օգտագործվում են հասկացություններ, որոնք սահմանման կարիք ունեն: Մասնավորապես, «առևտրային օբյեկտներ», «կառուցապատման և տեղակայման չափորոշիչներ», «առևտրային մակերես», «բարձր պահանջարկի ոչ պարենային բազմատեսակ ապրանքներ», «տեղային սպասարկման մակարդակ», «քաղաքային սպասարկման մակարդակ», «սպասարկման մակարդակ», «առևտրային օբյեկտների եռաստիճան համակարգ», «սոցիալական կարևորության առևտրային օբյեկտներ», «քաղաքային մակարդակի խոշոր առևտրային օբյեկտներ», «առևտրային ցանցերով ապահովվածու-

թյան ցուցանիշ», «առևտրային համալիրներ», «առևտրային օբյեկտների համակարգ», «ծառայությունների մատուցման քանակական և որակական ցուցանիշներ» և այլն.

3) նախագծում օգտագործվում են հստակեցման կարիք ունեցող հասկացություններ: Մասնավորապես, «հիպերմարկետ», «սուպերմարկետ», «խանութ-պահեստ»-«առավելապես», «հարող տարածքներ», «խոշոր առևտրային օբյեկտները գլխավորապես տեղակայվում են», «տեղական մակարդակի առևտրային օբյեկտ», «քաղաքային մակարդակի խոշոր առևտրային օբյեկտ» և այլն, որոնք իրավական ակտի գործնական կիրառման համար կարող են առաջացնել դժվարություններ.

4) 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետում «անհատ ձեռներեցներին» բառերն անհրաժեշտ է փոխարինել «անհատ ձեռնարկատերերին» բառերով՝ նկատի ունենալով «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները.

5) 6-րդ հոդվածի 5-րդ մասում անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչպիսի դրույթներ պետք է նախատեսված լինեն խոշոր առևտրային օբյեկտների ցանցի համակարգի զարգացման հեռանկարային համալիր ծրագրում և ինչպիսի չափանիշների այն պետք է բավարարի:

Նույն դիտողությունը վերաբերում է նաև քաղաքային նշանակության խոշոր առևտրային օբյեկտների տեղակայման համակարգին.

6) 7-րդ հոդվածի վերաբերյալ հայտնում ենք, որ սույն օրենքի պահանջները խախտելու համար որևէ իրավական ակտով պատասխանատվություն նախատեսված չէ: Բացի դրանից՝ «օրենսդրությամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «օրենքով» բառով՝ նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները, որոնց համաձայն բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունք-

ների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, ինչպես նաև պատասխանատվության տեսակները, չափերը, պատասխանատվության ենթարկելու կարգը: Անհասկանալի է նախագծով նախատեսված օրենքի պահանջների խախտման համար միայն տնտեսավարող սուբյեկտների համար պատասխանատվություն նախատեսելը: Գտնում ենք, որ օրենքի պահանջները խախտելու համար պետք է պատասխանատվություն կրեն խախտում թույլ տված բոլոր կողմերը.

7) 8-րդ հոդվածի 2-րդ մասի վերաբերյալ հայտնում ենք, որ «ենթաօրենսդրական ակտեր» հասկացություն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված չէ: Բացի դրանից՝ 2-րդ մասը հակասում է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-ին և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածների պահանջներին:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարևորում է նախագծում բարձրացված հարցերի կարգավորման անհրաժեշտությունը՝ առևտրի և ծառայությունների ոլորտում փոքր և միջին բիզնեսի պաշտպանության և զարգացման առաջնայնության տեսանկյունից:

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության տարածքում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտի կանոնակարգման խնդիրները և պետական կառավարման հիմքերը, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, առևտրի և ծառայությունների ոլորտում սպառողների իրավունքների պաշտպանությունը կարգավորվում են «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարությունը նպատակահարմար է համարում օրենքի նախագծով ներկայացված խնդիրները կարգավորել նշված օրենքի շրջանակներում: Դրան է ուղղված Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական

նախաձեռնության կարգով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը ներկայացված «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (Կ-056-24.08.2012-ՏՀ-010/0-Կ-056²-24.08.2012-ՏՀ-010/0) փաթեթը:

Ելնելով նշվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն օրենքի նախագծի հեղինակներին առաջարկում է համագործակցել Հայաստանի Հանրապետության կառավարության հետ և նախագծով առաջադրված խնդիրները լուծել Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացրած օրենսդրական նախաձեռնության շրջանակներում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից գեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արա Պետրոսյանը:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ

«Երևան քաղաքում խոշոր առևտրային օբյեկտների տեղակայման չափորոշիչներ սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Երևան քաղաքում խոշոր առևտրային օբյեկտների տեղակայման չափորոշիչներ սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Երևան քաղաքում խոշոր առևտրային օբյեկտների տեղակայման չափորոշիչներ սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Երևան քաղաքում խոշոր առևտրային օբյեկտների տեղակայման չափորոշիչներ սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է Երևան քաղաքում խոշոր առևտրային օբյեկտների կառուցապատման և տեղակայման չափորոշիչների նկատմամբ վերահսկողության սահմանման հիմքերին:*

Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է դրական ազդեցություն Նախագիծն ամբողջությամբ լրանվելու, ինչպես նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից 17.09.2012թ. թիվ 01/4798-12 ելից գրությամբ կատարված առաջարկությունները հաշվի առնելու դեպքում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Երևան քաղաքում խոշոր առևտրային օբյեկտների տեղակայման չափորոշիչներ սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Երևան քաղաքում խոշոր առևտրային օբյեկտների տեղակայման չափորոշիչներ սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) կարգավորվում է Երևան քաղաքում խոշոր առևտրային օբյեկտների կառուցապատման և տեղակայման չափորոշիչների նկատմամբ պետական վերահսկողության հետ կապված հարաբերությունները:

Նախագծով կարգավորվող շրջանակները առնչվում են սպառողական շուկայի հետ:

Ազդեցության գնահատման բուն գործընթացի փուլում առանցքային ուղղություններով կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Նախագծի ընդունումը կնպաստի փոքր և միջին բիզնեսի համար տնտեսական մրցակցության դաշտում հավասար պայմանների ձևավորմանը:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ արձանագրվել է Նախագծի ընդունմամբ մրցակցության բնագավառի վրա դրական ազդեցություն հայտնաբերվելու եզրակացություն:

Եզրակացություն

«Երևան քաղաքում խոշոր առևտրային օբյեկտների տեղակայման չափորոշիչներ սահմանելու մասին» ՀՀ օրենքի նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Երևան քաղաքում խոշոր առևտրային օբյեկտների տեղակայման չափորոշիչներ սահմանելու մասին» ՀՀ օրենքի նախագծի /այսուհետ՝ նախագիծ/ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

- ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**,
- բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից՝ **չեզոք ազդեցություն**:

ԱՂԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<< Երևան քաղաքում խոշոր առևտրային օբյեկտների տեղակայման չափորոշիչներ սահմանելու մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. <<Երևան քաղաքում խոշոր առևտրային օբյեկտների տեղակայման չափորոշիչներ սահմանելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենքի) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին, պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Երևան քաղաքում խոշոր առևտրային օբյեկտների տեղակայման չափորոշիչներ սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է սահմանել գերխոշոր, խոշոր և միջին առևտրային օբյեկտների բնութագրերը, այդ օբյեկտների կառուցապատման և տեղակայման չափորոշիչները, ինչպես նաև կարգավորել հիշյալ չափորոշիչների պահպանման նկատմամբ հսկողության իրականացման հետ կապված հարաբերությունները: Նախագծի ընդունումը նպատակաուղղված է նաև փոքր ու միջին առևտրային օբյեկտների շահերի պաշտպանությանն ու մրցակցության ապահովմանը, ինչպես նաև՝ մայրաքաղաքի տարածքում առևտրային տարածքների ապակենտրոնացմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ նախագծի ընդունման ազդեցությունը պետական բյուջեի եկամուտների և ծախսերի վրա կլինի չեզոք:

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Երևան քաղաքում խոշոր առևտրային օբյեկտների տեղակայման չափորոշիչներ սահմանելու
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

«Երևան քաղաքում խոշոր առևտրային օբյեկտների տեղակայման չափորոշիչներ սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

Պ-072-04.09.2012-S<-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԽՈՇՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան եւ նպատակը

1. Սույն օրենքը կարգավորում է Երեւան քաղաքում խոշոր առեւտրային օբյեկտների կառուցապատման եւ տեղակայման չափորոշիչների նկատմամբ պետական վերահսկողության հետ կապված հարաբերությունները, ինչպես նաեւ նրանց գործունեության հետ կապված այլ հարաբերություններ եւ ուղղված է փոքր ու միջին առեւտրային օբյեկտների շահերի պաշտպանությանն ու մրցունակության ապահովմանը:

2. Երեւան քաղաքում խոշոր առեւտրային օբյեկտների տեղակայման չափորոշիչների նկատմամբ պետական վերահսկողությունը կարգավորվում է սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաեւ իրավական այլ ակտերով, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Հոդված 2. Օրենքում կիրառվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքի իմաստով խոշոր առեւտրային օբյեկտներ են համարվում՝

1) հիպերմարկետ - մանրածախ առևտրի օբյեկտ, որն իրականացնում է սննդամթերքի եւ (կամ) ոչ պարենային բազմատեսակ ապրանքների առուվաճառք՝ առավելագույն ինքնասպասարկման եղանակով՝ 3000 եւ ավելի ք/մ առեւտրային մակերեսով,

2) սուպերմարկետ (ունիվերսամ) - մանրածախ առևտրի օբյեկտ, որն իրականացնում է սննդամթերքի եւ (կամ) բարձր պահանջարկի ոչ պարենային բազմատեսակ ապրանքների առուվաճառք՝ առավելագույն ինքնասպասարկման եղանակով՝ 300 եւ ավելի ք/մ առեւտրային մակերեսով,

3) խանութ-պահեստ - մանրածախ եւ մեծածախ առևտրի օբյեկտ, որն իրականացնում է սննդամթերքի եւ (կամ) ոչ պարենային բազմատեսակ ապրանքների վաճառք՝ առավելագույն արկղերով եւ փաթեթավորման այլ եղանակներով, ինչպես բնակչությանը, այնպես էլ կազմակերպություններին, անհատ ձեռներեցներին՝ հետագա վերավաճառքի կամ փոքր արտադրություններում օգտագործելու, բնակչությանը ծառայություններ մատուցելու նպատակով՝ 500 եւ ավելի ք/մ առեւտրային մակերեսով:

2. Սույն օրենքի իմաստով փոքր եւ միջին առեւտրային օբյեկտներ են համարվում մասնագիտացված եւ ոչ մասնագիտացված սննդամթերքի ու ոչ պարենային ապրանքների, խառը տեսականի ունեցող խանութները եւ տաղավարները՝ 7 եւ ավելի ք/մ առեւտրային մակերեսով:

Հոդված 3. Խոշոր առեւտրային օբյեկտների տեղակայման չափորոշիչների սահմանման նպատակները

1. Խոշոր առեւտրային օբյեկտների տեղակայման չափորոշիչները սահմանվում են առեւտրային ցանցերի համակարգի բարեփոխումների խնդիրների լուծման, ժամանակակից առեւտրային համայնքների ձեւավորման, բնակչության սպասարկման մակարդակի բարձրացման նպատակներով:

2. Խոշոր առեւտրային օբյեկտների տեղակայման չափորոշիչների կիրառումն ուղղված է՝

1) առեւտրային օբյեկտների համակարգի զարգացմանը, որը ներառում է սպասարկման երկու մակարդակներ (տեղային եւ քաղաքային),

2) խոշոր առեւտրային օբյեկտների եռաստիճան համակարգի ձեւավորմանը (հիպերմարկետներ, սուպերմարկետներ (ունիվերսամներ) եւ խանութ-պահեստներ, որոնք միմյանցից տարբերվում են

տեղակայման առանձնահատկություններով, ծառայությունների մատուցման քանակական եւ որակական ցուցանիշներով),

3) Երեւան քաղաքի տարածքում առեւտրային ցանցերի տեղակայման՝ ձեւավորված անհամամասնության հավասարակշռմանը, առավել սուղ առեւտրային մակերեսներ ունեցող վարչական շրջաններում նոր առեւտրի օբյեկտների բացման առաջնահերթությանը՝ մայրաքաղաքի կենտրոնը բեռնաթափելու նպատակով,

4) խոշոր առեւտրային օբյեկտների առկայության պայմաններում փոքր եւ միջին առեւտրային օբյեկտների շահերի պաշտպանությանն ու մրցունակության ապահովմանը, մայրաքաղաքի ամբողջ տարածքում բնակչությանը սոցիալական կարեւորության առեւտրային օբյեկտներով ապահովմանը:

Հոդված 4. Խոշոր առեւտրային օբյեկտների տեղակայմանը ներկայացվող պահանջները եւ չափորոշիչները

1. Քաղաքային մակարդակի խոշոր առեւտրային օբյեկտները (15-60 բոպե տեւողությամբ տրանսպորտահետիոտնային հասանելիության սպասարկման տրամագծով) ապահովում են բնակչության պարբերական պահանջարկի բավարարումը առաջնահերթ ապրանքներով եւ տեղակայվում են Երեւան քաղաքի հիմնական տրանսպորտային ուղիներին ու տրանսպորտային փոխադրման հանգույցներին հարող տարածքներում:

2. Քաղաքային հողերի սղության պատճառով, խոշոր առեւտրային օբյեկտների նոր շինարարությունը կարող է իրականացվել՝ հաշվի առնելով քաղաքային տարածքների արդյունավետ օգտագործումը, մասնավորապես վերգետնյա եւ ստորգետնյա տարածքների յուրացմամբ, անօգտագործելի արտադրական գոտիների տարածքների վերակազմակերպմամբ, արտադրական մակերեսները առեւտրային գործառույթներ ունեցող օբյեկտների վերակազմավորմամբ:

3. Խոշոր առեւտրային օբյեկտները գլխավորապես տեղակայվում են առեւտրային ցանցերով առավել ցածր ապահովվածության ցուցանիշներ ունեցող վարչական շրջաններում:

4. Խոշոր առեւտրային օբյեկտների չափաբաժինը Երեւան քաղաքի առեւտրային ցանցերի համակարգում՝ ըստ վարչական շրջանների, չի կարող գերազանցել 30-40%-ը՝ դրանց մակերեսների առնվազն 10-20%-ը առեւտրային փոքր օբյեկտներին վարձակալության տրամադրելու պայմանով:

Հոդված 5. Խոշոր առեւտրային օբյեկտների առկայության պայմաններում բնակչությանը սոցիալական կարեւորության առեւտրային օբյեկտներով ապահովման երաշխիքները

1. Երեւան քաղաքի վարչական շրջաններում տեղային մակարդակի առեւտրային օբյեկտները 7-10 բոպե հետիոտնային հասանելիությամբ, մինչեւ 300 մետր տրամագծով, ապահովում են բնակչությանը սոցիալապես երաշխավորված ծառայությունների մատուցում՝ բնակության վայրին առավել մոտ ապրանքների եւ ծառայությունների ամենօրյա եւ պարբերական պահանջարկի բավարարմամբ:

2. Երեւան քաղաքի վարչական շրջաններում փոքր եւ միջին առեւտրային օբյեկտներով նորմատիվային ապահովվածության ցածր ցուցանիշներ ունեցող տարածքները ենթակա են 1000 բնակչի հաշվարկով՝ 150 եւ ավելի ք/մ ընդհանուր մակերես ունեցող տեղային մակարդակի սպասարկման առեւտրային օբյեկտներով համալրման:

Հոդված 6. Խոշոր առեւտրային օբյեկտների ցանցի համակարգի զարգացման պետական քաղաքականությունը

1. Երեւան քաղաքում առեւտրային գործունեության կազմակերպման քաղաքականությունն ուղղված է մայրաքաղաքի տարածքում առեւտրային օբյեկտների տեղակայման ապակենտրոնացմանը՝ հաշվի առնելով խոշոր առեւտրային օբյեկտների տեղակայման առաջնահերթությունը քաղաքի արվարձանային եւ ոչ կենտրոնական գոտիներում:

2. Խոշոր առեւտրային օբյեկտների տարածքները կարող են նախատեսվել հետեւյալ գործառնական ուղղություններով. առեւտրային (մանրածախ եւ մեծածախ առեւտրային

օբյեկտներ), տրանսպորտային (ավտոկայանատեղիներ, ավտոսպասարկման ծառայություններ), պահեստային (մեծածախ պահեստային համալիրներ), վարչական, ցուցահանդեսային եւ մշակութաժամանցային:

3. Երեւան քաղաքում առեւտրային գործունեության կազմակերպման քաղաքականությունը ներառում է մայրաքաղաքի տարածքների պահուստավորումը՝ հետագայում այդ տարածքներում խոշոր առեւտրային օբյեկտներ տեղակայելու նպատակով:

4. Երեւան քաղաքում առեւտրային գործունեության կազմակերպման քաղաքականության նպատակը բնակչությանը սոցիալական կարելության առեւտրային օբյեկտներով ապահովման նորմատիվ մակարդակի երաշխավորումն է՝ մինչեւ 2020 թվականը:

5. Երեւան քաղաքի վարչական շրջաններում խոշոր առեւտրային օբյեկտների ցանցի համակարգի զարգացման հեռանկարային համալիր ծրագիրը եւ քաղաքային նշանակության խոշոր առեւտրային օբյեկտների տեղակայման հատակագիծը հաստատում է ՀՀ կառավարության լիազորված պետական մարմինը:

Հոդված 7. Պատասխանատվությունը սույն օրենքի պահանջները խախտելու համար

Սույն օրենքի պահանջները խախտելու համար առեւտրի եւ ծառայությունների ոլորտում գործունեություն իրականացնող իրավաբանական եւ ֆիզիկական անձինք կրում են պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 8. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 10 օր հետո:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը ընդունում է օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԽՈՇՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվի առնելով վերջին տարիներին Երեւան քաղաքում խոշոր առեւտրային օբյեկտների թվի ավելացման գործընթացը՝ անհրաժեշտություն է առաջացել օրենքով կարգավորել այդ օբյեկտների տեղակայման չափորոշիչները եւ դրանց հետ կապված իրավահարաբերությունները: Սույն օրենքի նախագիծը միտված է վերը նշված խնդիրների օրենսդրական կարգավորմանը:

Նախագծի 2-րդ, 3-րդ եւ 4-րդ հոդվածներով հստակ տրվում են գերխոշոր, խոշոր եւ միջին առեւտրային օբյեկտների բնութագրերը, խոշոր առեւտրային օբյեկտների տեղակայմանը ներկայացվող պահանջները եւ չափորոշիչները, ինչպես նաեւ դրանց սահմանման նպատակները:

Խոշոր առեւտրային օբյեկտների թվի ընդլայնումը իր բացասական ազդեցությունը կարող է թողնել միջին եւ փոքր առեւտրային օբյեկտների հետագա գործունեության վրա:

Սույն նախագծով փորձ է արվում կարգավորել մի քանի խնդիրներ: Նախագծի 3-րդ կետով նախատեսվում է, որ սույն օրենքը կարգավորում է Երեւան քաղաքում խոշոր առեւտրային օբյեկտների կառուցապատման եւ տեղակայման չափորոշիչների նկատմամբ պետական վերահսկողության հետ կապված հարաբերությունները, ինչպես նաեւ նրանց գործունեության հետ այլ հարաբերություններ եւ ուղղված է փոքր ու միջին առեւտրային օբյեկտների շահերի պաշտպանությանն ու մրցունակության ապահովմանը, որի հիմնական նպատակը մայրաքաղաքի տարածքում առեւտրային տարածքների տեղակայման ապակենտրոնացումն է:

Հաջորդ խնդիրը քաղաքային չօգտագործվող տարածքների արդյունավետ օգտագործումն է առեւտրային նպատակներով կառուցվող օբյեկտների համար:

Նախագծի 4-րդ հոդվածի 4-րդ կետով ամրագրված է, որ սույն օրենքի իմաստով փոքր եւ միջին առեւտրային օբյեկտներ են համարվում մասնագիտացված եւ ոչ մասնագիտացված սննդամթերքի

ու ոչ պարենային ապրանքների, խառը տեսականի ունեցող խանութները եւ տաղավարները՝ 7 եւ ավելի ք/մ առետրային մակերեսով:

Դրանց ցանցի զարգացումը միտված է միջին եւ փոքր առետրային օբյեկտների շահերի պաշտպանությանն ու մրցունակության ապահովմանը, մայրաքաղաքի ամբողջ տարածքում բնակչությանը սոցիալական կարեւորության առետրային օբյեկտներով ապահովմանը:

Նախագծի 6-րդ հոդվածով նախատեսվող խոշոր առետրային ցանցի համակարգի զարգացման քաղաքականության նպատակը բնակչությանը սոցիալական կարեւորության առետրային օբյեկտներով ապահովման նորմատիվ մակարդակի երաշխավորումն է մինչեւ 2020 թվականը: